ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/6-13

ք. Գավառ «13» մարտի2023թ.

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Գ. Սողոմոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Ալֆա ֆարմ իմպորտ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Մ. Մացակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Сканировано с CamScanner

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 8 132 206,00 /ութ միլիոն հարյուր երեսուներկու հազար երկու հարյուր վեց/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման

Сканировано с CamScanner

…ագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված …գի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է …անձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[19.1]:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

Сканировано с CamScanner

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ

Сканировано с CamScanner

...ական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների ...կի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք ...նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման ...մար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կ[illegible]ան միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
«Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
Հ/Հ 220085140329000
ՀՎՀՀ 08417304
Տնօրեն՝ Գ. Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ>> ՓԲԸ
Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Այ Դի Բանկ
Հ/Հ 11815019046000
ՀՎՀՀ 02606482
Հեռ. 060 61 52 58
էլ. հասցե՝ import@alfapharm.am
Տնօրեն՝ Մ. [illegible]

/ստորագրություն/
Կ.Տ.

«13» 03. 2025
«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/6-13»* ծածկագրով պայմա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									Մատակարարման		
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
2	33611240/501	ածուխ ակտիվացված 250մգ.	ածուխ ակտիվացված , Իրբիտսկի Քիմիադեղագործա-կան գործարան ԲԲԸ	ածուխ ակտիվացված դեղահատեր, 250մգ.	հատ	2,8	9 240	3300	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
4	33691185/501	Ակտովեգին 2մլ	Ակտովեգին Տակեդա Ֆարմասյուտիկալս ՍՊԸ,	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ լուծույթ ներարկման, 40մգ/մլ, 2մլամպուլներ, բլիստերում (25/5x5/)	հատ	333,3	1 333 120	4000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
11	33621740/503	ամլոդիպին դ/հ 5մգ	ամլոդիպին Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ,	ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ) դեղահատեր, 5մգ բլիստերում (30/3x10/)	հատ	6,1	110 520	18000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
27	33661121/505	Ասպիրին կարդիո 100մգ դ/հ	Ասպիրին կարդիո Բայեր Քոնսումեր Քեյր ԱԳ,	ացետիլսալիցիլաթթու դեղահատեր թաղանթապատ, աղելույծ , 100մգ բլիստերում (28/2x14/)	հատ	23,1	415 260	18000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
32	33621420/503	Ատորիս 40մգ	Ատորիս ԿՌԿԱ դ.դ.	ատորվաստատին (ատորվաստատին կալցիում) դեղահատեր թաղանթապատ, 40 մգ բլիստերում (30/3x10/)	հատ	55,6	333 840	6000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
36	33621390/503	Կորդարոն դ/հ 200մգ.	Կորդարոն, Խինոին Դեղագործական և Քիմիական Գործարան Փրայվիտ Քո. ՍՊԸ	ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ) դեղահատեր, 200մգ, (30/3x10/) բիլիստերում	հատ	55,4	88 640	1600	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
44	33691811/501	բիսակոդիլ 10մգ մոմիկ	Բիսակոդիլ, ֆարմապրիմ ՍՌԼ	բիսակոդիլ մոմիկներ ուղիղաղիքային10մգ, բլիստերում (10/2x5/)	հատ	43,2	73 440	1700	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
46	33671126/501	բրոմհեքսին 8մգ	բրոմհեքսին Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ,	բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ) դեղահատեր 8մգ բլիստերում (50/5x10/, 50/2x25/)	հատ	2,6	8 320	3200	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
49	33691176/515	Գանցլերոն 15մգ/մլ, 2մլ	Գանցլերոն, Արփիմեդ ՍՊԸ	գանցլեֆեն լուծույթ ներարկման, 15մգ/մլ, 2մլ ամպուլներ	հատ	290,0	1 015 000	3500	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	

Сканировано с CamScanner

54	33691138/502	գլյուկոզ 40% 5մլ	գլյուկոզ . Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ	դեքստրոզ լուծույթ և/ե ներարկման, 400մգ/մլ, 5մլ ամպուլներ պիտակ բանդերոլ (10), 5մլ ամպուլներ	հատ	36,7	[illegible] 680	400	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
59	33691212/502	Դետրալեքս	Դետրալեքս Լես Լաբորատոիրես Սերվիե	դիոսմին, հեսպերիդին դեղահատեր թաղանթապատ, 900մգ+100մգ: բլիստերում (18/2x9/) բլիստերում (30/3x10/) բլիստերում (60/6x10/)	հատ	177,4	74 520,6	420	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
73	33631310/504	դիկլոֆենակ դ/ի 100մգ	Դիկլոֆենակ, ֆարմապրիմ ՍՌԼ	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) մոմիկներ ուղիղաղիքային, 100մգ (10/2x5/)	հատ	52,0	20 800	400	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
78	33641310/501	Դյուֆաստոն 10մգ դ/ի	Դյուֆաստոն, ԱԲԲՕՏՏ Բիոլոջիկալս Բ.Վ., Վիրվեգ	դիդրոգեստերոն դեղահատեր թաղանթապատ 10մգ, բլիստերում (60/6x10/)	հատ	188,7	18 865	100	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
89	33621520/504	Էնա+ՀՔԹ-Դենկ 20/12.5 դ/ի	Էնա+ՀՔԹ-Դենկ 20/12.5 Դենկ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ,	էնալապրիլ (էնալապրիլի մալեատ), հիդրոքլորոթիազիդ դեղահատեր, 20մգ+12,5մգ (30/3x10/) բլիստերում	հատ	60,0	420 000	7000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
91	33671114/501	Էուֆիլին 24մգ/մլ, 5մլ ամպ	Էուֆիլին Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ,	ամինոֆիլին 24մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)	հատ	37,1	92 750	2500	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
92	33691191/502	Էսֆոլեն 5մլ ամպ	Էսֆոլեն, Լիկվոր ՓԲԸ	ֆոսֆոլիպիդներ (Էսենցիալ)-ԷՖԼ լուծույթ և/ե ներարկման, 250մգ/5մլ, 5մլ ամպուլներ	հատ	642,0	1 605 000	2500	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
103	33651135/501	Մեկոլ 40 մգ	Մեկոլ Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ,	քլորամֆենիկոլ, մեթիլուրացիլ քսուք, 7.5մգ/գ+40մգ/գ, 40գ այլումինե պարկուճ	հատ	217,0	43 400	200	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
109	33661116/504	Լիդոկային-Լիկվո 20մգ/մլ, 20 մլ ամպ	Լիդոկային- Լիկվո Լիկվոր ՓԲԸ	Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) լուծույթ ներարկման 20մգ/մլ, 20 մլ	հատ	770,4	539 280	700	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
110	33691192/501	լիդոկային - Լիկվո, էպինեֆրինով ամպ	լիդոկային -Լիկվո, էպինեֆրինով Լիկվոր ՓԲԸ	լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ), էպինեֆրին լուծույթ ներարկման, 20մգ/մլ+0,01մգ/մլ, 20մլ ապակե սրվակներ (1, 10)	հատ	834,6	125 190	150	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
111	33691213/501	Լինեքս 1,2x10^7	Լինեքս, Լեկ Ֆարմասյութիքալս դ.դ.	լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ դեղապատիճներ կոշտ 1,2x10^7, (16/2x8/) բլիստերում	հատ	104,0	416 000	4000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
112	33691203/502	Լորիստա ՀԴ դ/ի	Լորիստա ԿՌԿԱ դ.դ.	լոզարտան (լոզարտան կալիում), հիդրոքլորոթիազիդ դեղահատեր թաղանթապատ, 100մգ+25մգ: (28/2x14/). բլիստերում	հատ	64,5	193 380	3000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
117	33691231/501	Կալցի- Դենկ	Կալցի- Դենկ Դենկ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ,	կալցիում (կալցիումի կարբոնատ), քոլեկալցիֆերոլ դեղահատեր դյուրալույծ, 1000մգ+22մկգ(880ՄՄ): (20) պլաստիկե տարայում	հատ	142,3	711 250	5000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի

Сканировано с CamScanner

120	33621510/501	կապտոպրիլ դ/h 25 մգ	կապտոպրիլ Բորիսովյան բժշկապատրաստուկ գործարան» ԲԲԸ	կապտոպրիլ դեղահատեր 25 մգ, (40/4x10/), բլիստերում	հատ	3,3	18 150	5500	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
127	33691199/501	Կարսիլ 22.5մգ թաղանթապատ դ/h	Կարսիլ 22.5մգ , Սոֆարմա ԲԲԸ	սիլիմարին դեղահատեր թաղանթապատ, 22,5մգ; (80/8x10/)	հատ	20,8	31 260	1500	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
133	33621140/502	կլոպիդոլ 75 մգ դ/h	Կլոպիդոլ, ԱԼԱԲ ֆարմասյուտիկալս ՍՊԸ	կլոպիդոգրել (կլոպիդոգրելի բիսուլֆատ) դեղահատեր, 75մգ	հատ	49,6	148 800	3000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի
134	33621764/502	Կո- Ամլեսա դ/h	Կո- Ամլեսա ԿՌԿԱ դ.դ.	պերինդոպրիլ (պերինդոպրիլի տերտ-բուտիլամին), ինդապամիդ, ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ) դեղահատեր, 8մգ+2,5մգ+5մգ, (30/3x10/), բլիստերում	հատ	90,5	271 500	3000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի

***Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21, «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-16:00:

դեղերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման

*Դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝ ... մնացորդային պիտանիության ժամկետ, բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս

ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ, ... կամ դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետը, հանձնելու պահին դեղի մնացորդային մնացորդային պիտանիության ժամկետ, գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը կամ ... Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի պիտանիության ժամկետը սահմանվում է պատվիրատուի կողմից, բայց ոչ պակաս, քան 3 ամիս: Սույն կետը գործում է ... կարիքների համար ձեռք բերվող դեղերի համար Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության

ԳՆՈՐԴ

<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
«Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/6
h/h 220085140329000
ՀՎՀՀ 08417304
Տնօրեն՝ Գ. Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ>> ՓԲԸ
Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Այ Դի Բանկ
Հ/Հ 11815019046000
ՀՎՀՀ 02606482
Հեռ. 060 61 52 58
էլ. հասցե՝ import@alfapharm.am
Տնօրեն՝ Մ. Մանասյան

/ստորագրություն/